ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 30-Ա

<<30>> ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու ութերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին:

2. Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին:

3. Բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ (3) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան	Վաղինակ
Մանուչարյան	Ֆելիքս
Բայրամյան	Միքայել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ.Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն

<<30>> ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջների և "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել տեղական վճար.

1) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համատեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/ դրամ:

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողնից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար յուրաքանչյուր մասնակցի համար սահմանել 1000/հազար/ դրամ:

2. Սահմանել տեղական տուրք.

1) Համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի վաճառքի համար, հանրային սննդի օբյեկտում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում

վաճառքի / իրացման / կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել 1500 / մեկ հազար հինգ հարյուր / դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 / հինգ/ հազար դրամ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքի շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական / շինությունների / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրք սահմանել :

3. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

1) Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ:

4. Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

1) Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000/ երեք / հազար դրամ:

2) 20 և ավելի քառսակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 / հինգ / հազար դրամ:

Կողմ (3) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռաֆիկ Սարիբեկյան**

(Կ.Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 32-Ա

<<30>> ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ

ԴԻՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Դիտավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը ըստ հավելված 1-ի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Դիտավան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 21-ի <<Դիտավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին>> N22-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (3) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ _____

Մանուչարյան Ֆելիքս _____

Բայրամյան Միքայել _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ.Տ.)

Հավելված 1

Դիտավան գյուղական համայնքի ավագանու

2017 թվականի նոյեմբերի 30-ի N 32 - Ա որոշման

ԴԻՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	117400		117400
	Համայնքային ծառայողներ				
2	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	87100		87100
3	Առաջատար մասնագետ 3.1-1	1	72751		72751
4	Առաջատար մասնագետ 3.1-2	1	72751		72751
	Տեխսպասարկման անձնակազմ				
5	Հարկահավաք	0.5	97620		48810
6	Հավաքարար	0.5	83100		41550
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	530722		440362

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղազարյան

ստորագրություն անուն, ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 33-Ն

<<30>> ՆՈՅԵՄԲԵՐ 2017 ԹՎԱԿԱՆ

Բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Դիտավան համայնքի 2017 թվականի վարչական բյուջեում անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշ փոփոխություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Դիտավան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտները նվազեցնել 6000 (վեց հազար) դրամով, որից՝

1.1 Տեղական տուրք 6 000 (վեց հազար) դրամ, քանի որ համայնքում գործող երկու խանութներից մեկը 2017 թվականին լուծարվել է :

2. Դիտավան համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերը նվազեցնել 6 000 (վեց հազար) դրամով, որից՝

2.1 <<Համայնքի պահուստային ֆոնդ >>/ բաժին 11, խումբ 01, դաս 02/ հոդված 4891 – 6 000 (վեց հազար) դրամ:

Ավագանու անդամներ

Կողմ (3) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ

Մանուչարյան Ֆելիքս

Բայրամյան Միքայել

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ.Տ.)